Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

352
Հ-11

Պրոլետարական բոլոր յեղեղրների, միացեք։

Հ. Խ. Ս. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ.
2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՆԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՑԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ.
3. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՑԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ.

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ՑԵՐԵՎԱՆ 1925

352
Հ-11
կպ.

Հ. Խ. Ս. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ.
2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ.
3. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Խ. Ս. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 1925

09 SEP 2013

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից 1925 թ. մարտի 16-ին

Գյուղական խորհուրդը, իշխանության ժամին հանդիսանալով յուր գտնված վայրի սահմաններում, ունի հետևյալ գլխավոր խնդիրները. գյուղացիական տնտեսության բարձրացումը, պայքար ագիտության, խավարի, հիվանդությունների և գյուղական կյանքի այլ թերությունների դեմ. աշխատավոր բնակչության իրավունքների պաշտպանությունը՝ բանվորների և գյուղացիների միության հիման վրա. վերջքան կարելի յե՝ ճիշտ և լիակատար գործադրությունը բանվորա գյուղացիական կառավարության որենքների, վերոնց նպատակն է աշխատավորների կյանքի բարվոքումը. լայն չափերով գյուղացի տղամարդկանց և կանանց գրավելը պետությունը կառավարելու և պետական ապպարատը բարելավելու գործի մեջ. Հիշյալ նպատակներով գյուղական խորհուրդները կազմակերպվում են հետևյալ հիմունքներով.

I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գյուղական խորհուրդը քննում և մշակում է գյուղական վայրերի կյանքի ու տնտեսության շինարարության վերաբերյալ բոլոր խնդիրները և յուր վճիռներն ի կատար է ածում սահմանված կարգով.

2. Յուր իրավունքներն իրականացնելու և յուր վրա դրված պարտականությունները կատարելու կարգով գյուղական խորհուրդը.

ա. Պաշտպանում է գյուղական վայրերում ապրող գյուղացիների, բանվորների, մշակների՝ տղամարդկանց և կանանց իրավունքները

բ. Հոգ է տանում գյուղի բոլոր աշխատավոր բնակչության կուլտուրական կրթական կենցաղի բարվոքման մասին.

գ. Աջակցում է աշխատավոր բնակչության փոխադարձ ոգնության և կոոպերացիաներ կազմակերպելու գործին.

դ. Կարուկ պայքար է մղում խավարի, տգիտության, գռեհկության, պետական գույքի հափշտակության, կաշառակերության, վաշխառության, սարկացուցիչ գործարքների և այլ որինազանցությունների դեմ.

ե. Հսկում է որենքների գործադրության վրա և կատարում է բանվորա-գյուղացիական կառավարության վերադաս մարմինների կարգադրությունները։

զ. Միավորում է գյուղխորհուրդին յենթակա և նրա սպասարկած վայրում գտնվող բոլոր խորհրդային կազմակերպությունների գործունեությունը։

3. Գյուղական խորհուրդը միջոցներ է ձեռք առնում բոլոր աշխատավոր բնակչությունը տեղական կյանքի շինարարության գործի մեջ քաշելու համար, վորպեսզի գյուղացի տղամարդիկ և կանայք կարողանան մասնակցել իրենց գյուղացիական գործերը կառավարելու մեջ։

4. Այս նպատակով գյուղական խորհուրդը

ա. գումարում է բնակիչների ընդհանուր ժողովներ.

բ. հայտարարում և բացատրում է Բանվորա-գյուղացիական Կառավարության որենքներն ու իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների կարգադրությունները.

գ. անհրաժեշտ դեպքերում հանձնաժողովներ է կազմում և զանազան հանձնարարություններ է անում առանձին քաղաքացիների և քաղաքացիների խմբերի.

դ. աջակցում է կոոպերատիվների և այլ կազմակերպությունների, վորոնց նպատակն է գյուղացիական կյանքի և գյուղատնտեսության պայմանների բարելավումը.

ե. կատարում է բնակիչների ընդհանուր ժողովների որինական վորոշումները.

զ. անհրաժեշտ դեպքերում ներկայացնում է բարձրագույն տայաններին բնակիչների ընդհանուր ժողովների բոլոր վորոշումները, նրանց ցանկությունները ու խնդիրները.

ը. հաշիվ է տալիս բնակիչներին յուր գործունեության և իրեն վրա դրված հանձնարարությունների կատարման մասին։

5. Գյուղական խորհրդի բոլոր վորոշումները, վոր չեն հակասում գործող որենքներին, պիտի գործադրվին նրա գտնված վայրի սահմաններում։

6. Գյուղական խորհուրդը հաշվետու է պատշաճ Գավառակային Գործադիր Կոմիտեի առաջ։

II. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Կառավարչության և հեղափոխական իրավակարգի պահպանության վերաբերմամբ գյուղական խորհրդի վրա դրվում է.

ա. Աջակցություն ընտրական հանձնաժողովներին ընտրական ցուցակներ կազմելու և ստուգելու գործում, այլ և այդ ցուցակներից հանելու այն անձանց, վորոնք Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության համաձայն ընտրական իրավունք չեն վայելում.

բ. պայքար հանցագործության դեմ (գաղտնի ողեգործության, անատուններ գողանալու, ինքնագլուխ անտառահատության, դասալքության, սրիկայության և այլ հանցանքների) գործող որենքների հիման վրա.

գ. հսկողություն իշխանության կենտրոնական և տեղական մարմինների բոլոր կարգադրությունների կատարման վրա և Գավառակային Գործադիր Կոմիտեին այդ կարգադրություններին հակառակելու դեպքերի մասին տեղեկություն տալը.

դ. հանցագործություններ յերևան հանելիս բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնելը, մինչև իսկ պատասխանատվության յենթակա անձանց ձերբակալելով, հայտնելով այդ մասին անհապաղ Գավառակային Գործադիր Կոմիտեին.

ե. հսկողություն յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելուն վերաբերյալ որենքների կանոնավոր կիրառման վրա.

զ. հսկողություն ընկերությունների, ժողովների և հրապարակական հանդեսների վերաբերմամբ սահմանված կանոնների կատարման վրա.

ը. Գավառակային Գործադիր Կոմիտեին սարկացուցիչ գործարքներ կնքելու դեպքերի մասին հաղորդելը՝ այդպիսի գործարք-

ները սահմանված կարգով լուծելու և հանցագործներին պատասխանատվության յենթարկելու համար։

Թ. բնակչությանը առաջ քաշել պայքարելու տարերային աղետների դեմ, մասնավորապես անտառների հրդեհների, բույսերի վնասատուների դեմ և այլն.

Ժ. իշխանության վերադաս մարմինների հատուկ կարգադրությամբ յերկաթուղիները, փոստ-հեռագրական, հեռախոսի և յալեկտրական ցանցերը պահպանելը.

Ի. հոգատարություն փոստային հաղորդակցության կազմակերպության մասին և ամեն կերպ նրան աջակցելը.

Լ. բնակիչներին անհրաժեշտ վկայականներ տալը.

Խ. բնակիչներից ամեն տեսակ դիմումներ ընդունելն ու քննելը և յուր յեզրակացություններովն հանդերձ բնթացք տալն այն խնդիրներին, որ գյուղական խորհրդի քննության յենթակա չեն.

Ծ. Գավառակային Գործադիր Կոմիտեյին պարտադիր որոշումներ խախտելու համար վարչական պատիժներ նշանակելու առաջարկություն անելը.

Կ. գյուղական կատարածուների ցուցակներ նախագծելը հերթականության կարգով և նրանց գործունեության ղեկավարությունը.

Հ. քաղաքացիական վիճակի ակտերի տարարգրությունը որենքով որոշված սահմաններում.

Ձ. պատշաճ դեպքերում անձանց և գույքի խնամակալների և հոգաբարձուների ընտրություն.

Ղ. ատարագրությունների, այլ և պայմանագրների ու գործարքների վավերացումը՝ այդ մասին գոյություն ունեցող հատուկ որենքների հիման վրա և այդ որենքների սահմաններում.

Ճ. բնակչության հաշվառությունը սահմանված ձևով և նորեկների տարարգրությունը.

Մ. բոլոր պաշտոնական անձանց և իշխանության մարմիններին աջակցություն ցույց տալը.

Յ. կառավարչության և հեղափոխական իրավակարգի պահպանության վերաբերյալ բոլոր մատնանշված միջոցները գործադրելիս գյուղական խորհուրդն իրավունք ունի աջակցություն պահանջելու բնակչությունից և միլիցիայից, դիմելով Գավառակային Գործադիր Կոմիտեյին կամ գավառակային միլիցիապետին.

Ն. Հողային գործի, տնտեսության, առևտրի և բարեկարգության վերաբերմամբ գյուղական խորհուրդը՝

ա. միջոցներ է ձեռք առնում գյուղատնտեսության բարվոքված յեղանակներ կիրարկելու համար, այլ և լսում է ագրոնոմիական հիմնարկությունների զեկուցումները.

բ. աջակցում է հավաքական տնտեսությունների կազմակերպությանն ու զարգացմանը և ոգնում ու ուժանդակում է այդ աշխատանքը կատարող մարմիններին.

գ. կազմակերպում և գյուղատնտեսական գործիքներ վարձու տալու, զուգավորման, հացահատիկներ զտելու, անասնաբուժական և այլ կայաններ, այլ և գործիքներ նորոգելու արհեստանոցներ, և հոգ է տանում այդպիսի արհեստանոցներ ու կայաններ բանալու մասին.

դ. աջակցում է ագրոնոմիայի, հողաշինարարության, անտառային և անասնաբուժության պաշտոնյաներին՝ իրենց գործունեության ընթացքում.

ե. ղեկավարում է յուր ոպասարկած վայրի սահմաններում սերմացու համբարելու գործը և սերմանման կամպանիաները.

զ. ղեկավարում է սերմացուի տեղական ֆոնդեր կազմակերպելու, գործը և միջնորդում է սերմացուի փոխատվության մասին.

ը. նախազգուշության միջոցներ է ձեռք առնում անասունների հիվանդությունների տարածման դեմ (կարգադրություններ է անում հիվանդացած անասուններին առանձնացնելու, անասնաբույժներ հրավիրելու, վարակիչ հիվանդություններից սատկած անասուններին թաղելու մասին և այլն)

թ. հետևում է, որ կատարվեն բնակչության կարիքների համար փայտեղեն բաց թողնելու կանոնները.

ժ. մասնակցում է բնակիչների միջև ծագող առանձին հողային վեճերի քննությանը՝ կենտրոնական իշխանության այդ մասին հրատարակած հատուկ հրահանգների հիման վրա.

ի. աջակցում է ամեն տեսակ կոոպերատիվ կազմակերպությունների զարգացմանն ու գործունեությանը.

լ. ղեկավարում է գյուղական խորհրդի արտադրության տակ գտնվող ձեռնարկությունները (դարբնոցները, ջրաղացները և այլն).

խ. չի թույլ տալիս առանց պատենտի առևտուր անելը։

ծ. չի թույլ տալիս հրաշինանյութերի, վողելիքների առևտուր անել՝ առանց այդ մասին սահմանված հատուկ կանոնների հետևելու.

կ. բարեկարգ վիճակի մեջ է պահում տեղական, գյուղական նշանակություն ունեցող ճանապարհներն ու կամուրջները, այլ և հսկում է գավառակային, գավառային և պետական նշանակություն ունեցող ճանապարհների և կամուրջների բարեկարգության վրա.

հ. հսկում է շինարարական և հրդեհների առաջն առնելու կանոնների կիրարկության վրա.

ձ. կազմակերպում է հրդեհների առաջն առնելու գործը և հետևում է, որ բնակիչները հրդեհների դեմ մաքառելու վերաբերյալ իրենց պարտականությունները կատարեն.

ղ. կազմակերպում է ոգնություն անտառների հրդեհները հանգցնելու համար. և

ճ. հսկում է գյուղերի սանիտարական վիճակի վրա և միջոցներ է ձեռք առնում սանիտարական պայմանները բարելավելու համար.

մ. տեսարարում է հողի վարձակալության պայմանագրերը և հետևում է, որ կնքված պայմանագրերը համապատասխան լինեն գոյություն ունեցող օրենքներին։

9. Ֆինանսա-հարկային գործի վերաբերյալ գյուղական խորհուրդը՝

ա կազմում է գյուղական խորհրդի՝ գավառակային բյուջեի մեջ մտնող յուրաքանչյուր նախահաշիվները.

բ. հաշիվ է տալիս ընտրողներին ու Գավառակային Գործադիր Կոմիտեին գյուղական խորհրդին արտադրած միջոցները ծախսելու մասին.

գ. միջոցներ է ձեռք առնում միասնական գյուղատնտեսական հարկը գանձելու համար.

դ. Գավառակային Գործադիր Կոմիտեի կարգադրությունն ստանալուց հետո կազմում է գյուղատնտեսական հարկ վճարողների ցուցակներն ըստ գյուղերի.

ե. հարկի և հաշվառության յենթակա առարկաների թաքցնելու առաջն է առնում.

զ. հետևում է, որ միասնական գյուղատնտեսական հարկի վերաբերյալ արտոնությունները ի կատար ածվեն և միջնորդում է Գավառակային Գործադիր Կոմիտեի առաջ այդպիսի արտոնությունների անհրաժեշտության մասին.

ը. միջոցներ է ձեռք առնում տուգանքները գանձելու համար.

միասնական գյուղատնտեսական հարկը ժամանակին չվճարելու դեպքում.

թ. աջակցում է արհեստահարկը գանձելուն.

ժ. Գավառակային Գործադիր Կոմիտեի հանձնարարությամբ գանձում է ապառիկ մնացած հարկերն ու տուրքերը

ի. չի թույլ տալիս օրենքով չսահմանված հարկերի ու տուրքերի գանձումը.

լ. մասնակցում է ապահովագրության գործակալների գնահատության աշխատանքներին, վորոշում է գյուղատնտեսության հասցրած վնասների չափը և աջակցում է ապահովագները ժողովելուն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառական Գործադիր Կոմիտեի առաջարկությամբ խոշոր գյուղերի գյուղխորհուրդներին կենտրոնական Գործադիր Կոմիտեն կարող է բյուջեի իրավունք վերապահել։

10. Զինվորական գործի վերաբերյալ գյուղական խորհուրդը՝

ա. հաշվի է առնում բոլոր զինապարտ բնակիչներին.

բ. հաշվի է առնում ձիանը, սայլերը, ձիասարքերը՝ այդ մասին գոյություն ունեցող հատուկ օրենքների ու կանոնների համաձայն.

գ. հսկում է, որ զինապարտ բնակիչները ճշտությամբ ներկայանան ստուգողական զորամոդովներին.

դ. աջակցում է աշխատավորների ընդհանուր զինվորական ուսուցման վերաբերյալ բոլոր կարգադրությունների կատարմանը.

ե. տեղավորում է անցնող զորամասերն ու շենքեր է հատկացնում զինվորական հիմնարկությունների համար։

11. Աշխատանքի վերաբերյալ գյուղական խորհուրդը՝

ա. յուր գտնված վայրի սահմաններում հսկում է, որ ժամանակին ու ճշտությամբ կատարվեն աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող օրենքներն ու իշխանության կենտրոնական մարմինների կարգադրությունները.

բ. աջակցում է արհեստակցական կազմակերպությունների գործունեությանը։

12. Կուլտուր-կրթական և առողջապահության գործի վերաբերմամբ գյուղական խորհուրդը՝

ա. միջոցներ է ձեռք առնում դպրոցական և նախադպրոցական ցանցը զարգացնելու համար և հնարավոր ոգնություն է ցույց տալիս դպրոցներին.

բ. գործադրում է անգրագիտության դեմ պայքարելու միջոցները.

գ. կազմակերպում է խրճիթ ընթերցարաններ և գրադարաններ, միջոցներ է ձեռք առնում ստանալու և տարածելու բնակչության մեջ լրագրներ, հանդեսներ, գրքեր, որինագրքեր և այլն, այլ և աջակցում է գյուղական թղթակիցներին.

դ. կազմակերպում է գյուղական բժշկա-սանիտարական հիմնարկություններ.

ե. իրագործում է վարակիչ հիվանդությունները կանխելու և նրանց դեմ պայքար կազմակերպելու համար տրված կարգադրությունները.

զ. հոգ է տանում մայրության և մանկության պաշտպանություն կազմակերպելու մասին.

ը. աջակցում է գյուղական բնակչության ինքնագործունեության զարգացմանը՝ կուլտուր-կրթական և բժշկա-սանիտարական հիմնարկություններն անհրաժեշտ միջոցներով և նյութերով ապահովելու գործում.

թ. աջակցություն է ցույց տալիս ուսուցչական և բժշկական աշխատանքներին, զեկուցումներ է լսում կուլտուր-կրթական և բժշկա-սանիտարական հիմնարկությունների գործունեության մասին։

13. Սոցիալական ապահովության վերաբերմամբ գյուղական խորհուրդը՝

ա. ամեն կերպ աջակցում է փոխադարձ ողնության գյուղացիական ընկերություններին և հսկում է նրանց գործունեության վրա.

բ. գոյություն ունեցող օրենքների ու կանոնների համաձայն ողնում է հաշմանդամներին, կարմիր զինվորների ընտանիքներին, ռազմաճակատում սպանվածների ընտանիքներին, զինվորական ծառայությունից ազատվածներին ու նրանց ընտանիքներին, այլ և աջակցում է հաշմանդամների արտելներ կազմակերպելուն ու նրանց գործունեությանը։

III. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

14. Գավառակների գյուղական վայրերի գյուղական խորհուրդները կազմվում են այն հաշվով, որ յուրաքանչյուր 50 բնակիչը

տված լինի մի պատգամավոր, բայց որ ընդհանուր առմամբ ունենան ոչ պակաս քան 7 և ոչ ավելի քան 50 պատգամավոր։

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. 300-ից պակաս բնակիչ ունեցող գյուղերը մասնակցում են հարևան գյուղի գյուղական խորհրդի ընտրությանը. վորոշ դեպքերում կառավարչության խնդիրները կարող են վստահվել ընտրողների ընդհանուր ժողովներում՝ համաձայն Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության 44 հոդ. ծանոթ. 2։

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. 50-ից մինչև 100 բնակիչ ունեցող գյուղերի համար, այլ և այն գյուղերի, որ հարևան գյուղի հետ միասին մի ընդհանուր խորհուրդ ունին, նշանակվում է տվյալ գյուղի հետ կապ ունեցող գյուղական խորհրդի լիազոր, որ անդամ է հանդիսանում այն խորհրդի, որին վերաբերում է տվյալ գյուղը։

15. Գյուղական խորհուրդների ընտրության կարող են մասնակցել այն բոլոր քաղաքացիները, որոնք ընտրական իրավունքներ ունին՝ Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության համաձայն։ Ընտրությունը տեղի է ունենում Հայաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրահանգի հիման վրա։

16. Գյուղական խորհուրդներն ընտրվում են մի տարով։

17. Գյուղական խորհրդի նիստերը գումարվում են վորոշ օրեր, որ ոչ պակաս քան յերկու շաբաթը մի անգամ։

18. Գյուղական խորհուրդների նիստերին խորհրդակցական ձայնով կարող են մասնակցել տեղական արհեստակցական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, գյուղական խորհրդի մեջ իրենց ներկայացուցիչները չունեցող գյուղերի լիազորները, կանանց պատգամավորական ժողովների ներկայացուցիչները, այլ և գյուղական պաշտոնատար անձինք (բժիշկները, ագրոնոմները, ուսուցիչները, հողաշինարարները, գյուղական կատարածուները և այն)։

19. Գյուղական խորհրդի գլուխն է նախագահը, որին ընտրում է գյուղական խորհուրդը իր անդամներից։

20. 15-ից ավելի անդամներ ունեցող գյուղխորհուրդները Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի հրահանգի հիման վրա ընտրում են նախագահություն 3-5 անդամների կազմով։

21. Գյուղական խորհուրդների ֆինանսա-տնտեսական գործունեությունն ստուգելու համար խորհուրդների ընտրության հետ միաժամանակ ընտրվում է վերատեսուչ հանձնաժողով, որ իր գործն ավարտում է նոր խորհրդի ընտրությունից մի ամիս առաջ

և գյուղական նախկին խորհրդի գործունեության մասին զեկուցանում է բնակիչների ընդհանուր ժողովին։

IV. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Գյուղական խորհուրդների նիստերի միջանկյալ ժամանակաշրջանում խորհրդի նախագահը գործադրում է այն բոլոր գործնական միջոցները, որ անհրաժեշտ են գյուղական խորհուրդների վճիռները և իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների կարգադրությունները կատարելու համար, զեկուցանելով այդ մասին գյուղական խորհրդի առաջիկա նիստում։

23. Գյուղական խորհրդի անդամները, բացի իրենց խորհրդի մեջ ունեցած մշտական աշխատանքից, պարտավոր են մասնակցել գյուղական խորհրդի կազմած հանձնաժողովներին, այլ և կատարել գյուղական խորհրդի որոշ հանձնարարություններ։

24. Անգործության, գեղծումների և իշխանազանցության, բնակչության հետ կոպիտ վարվելու համար, այլ և գյուղական ընդհանուր ժողովների միջնորդության հիման վրա՝ վերադաս մարմինների որոշումներին չենթադրելու և ճշտությամբ չկատարելու համար՝ գյուղական խորհրդի նախագահն ու անդամները գավառակային Գործադիր Կոմիտեի որոշմամբ և Գավառային Գործադիր Կոմիտեի հաստատությամբ կարող են հեռացվել իրենց պաշտոններից, անկախ քրեական հետապնդումից կամ կարգապահական պատասխանատվությունից։

25. Գյուղական Խորհրդի նախագահն ու անդամներն իրավունք չունին, առանց գյուղական խորհրդի և Գավառակային Գործադիր Կոմիտեի գիտության և համաձայնության՝ թողնելու իրենց պաշտոններն ու գործը։

26. Գյուղական խորհրդի նախագահն ու անդամներն իրավունք ունին մասնակցելու գյուղական խորհրդին յենթակա վայրում գործող հիմնարկությունների ու կազմակերպությունների նիստերին ու խորհրդակցություններին։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ

Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից 1925 թ. մարտի 16-ին

Խորհուրդների գավառակային Համագումարները և նրանց միջանկյալ ժամանակաշրջանում Գավառակային Գործադիր Կոմիտեներն իրենց իրավասության սահմաններում իշխանության բարձրագույն մարմիններն են գավառակում։ Իշխանությունն իրագործելու և աշխատավորների իրավունքները՝ բանվորների և գյուղացիների միության հիման վրա պաշտպանելու, այլ և բանվորագյուղացիական կառավարության որենքներն ավելի լիակատար և կանոնավոր յեղանակով կիրարկության դնելու, անտեսությունը բարձրացնելու, գյուղական վայրերում կյանքի պայմանները բարվոքելու և ավելի լայն չափով աշխատավորներին պետությունը և տեղական գործերը կառավարելու աշխատանքին գրավելու նպատակով՝ խորհուրդների գավառակային Համագումարներն ու Գավառակային Գործադիր Կոմիտեները կազմակերպվում են հետևյալ հիմունքներով.

ՀԱՏՎԱԾ I

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1 Խորհուրդների գավառակային Համագումարների իրավասությանն է վերաբերում.

ա. քննությունն ու լուծումն այն բոլոր խնդիրների, որ վերաբերում են տվյալ գավառակի կառավարելուն ու տնտեսությանը, այն է՝ միջոցներ ձեռք առնելը գավառակի կուլտուրական և տընտեսական բարգավաճման համար, տեղական գավառակային բյուջեի և Գավառակային Գործադիր Կոմիտեի՝ յուր գործունեության և գավառակային բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկագրի քննությունը, այլ և նոր բյուջեն և կատարված բյուջեի վերաբեր-

յալ տեղեկագիրը Գավառային Գործադիր Կոմիտեին ներկայացնելը.

բ. քննությունն ու հաստատությունը Խորհուրդների գավառակային Համագումարին յենթակա իշխանության մարմինների գործունեության տեղեկագրների, այլ և գավառակի սահմաններում գտնվող պետական և հասարակական հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեության տեղեկագրները լսելն ու քննելը.

գ. քննությունը համապետական և գավառային նշանակություն ունեցող խնդիրների թե իրենց նախաձեռնությամբ և թե խորհուրդների վերադաս համագումարների և գործադիր կոմիտեների առաջարկությամբ։ Այդպիսի խնդիրների վերաբերյալ միջոցառությունները ու յենթադրությունները հղվում են ի հաստատություն իշխանության վերադաս մարմինների.

դ. ընտրությունը Գավառակային Գործադիր Կոմիտեի և գավառակային հողային հանձնաժողովի անդամների, այլ և խորհուրդների գավառակային համագումարի պատգամավորների։

2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ.

2. Խորհուրդների գավառակային Համագումարը կազմվում է գավառակի սահմաններում գտնվող բոլոր խորհուրդների ներկայացուցիչներից, գյուղական խորհուրդներից՝ 300 բնակչին մի պատգամավորի հաշվով։

3. Խորհուրդների գավառակային համագումարների ընտրության կարգը որոշվում է Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության 48 հոդվածի և ՀՍԽՀ Կենտգործկոմի հրահանգի հիման վրա։

4. Խորհուրդների գավառակային համագումարները լինում են հերթական և արտակարգ։

5 Խորհուրդների գավառակային հերթական համագումարները հրավիրում է Գավառակային Գործադիր Կոմիտեն տարին մի անգամ՝ խորհուրդների գավառային համագումարներից առաջ, այնպիսի հաշվով, որ հնարավոր լինի ժամանակին պատգամավորներ ուղարկել խորհուրդների գավառային համագումարներին։

6. Խորհուրդների գավառակային արտակարգ համագումարներ հրավիրում է Գավառակային Գործադիր Կոմիտեն՝ Գավառային Գործադիր Կոմիտեի առաջարկությամբ, այլ և գավառակի բնակչության վոչ պակաս քան մի յերրորդը միացնող խորհուրդների պահանջմամբ։

7. Խորհուրդների գավառակային հերթական և արտակարգ համագումարներ հրավիրելու ժամանակը սահմանում է Գավառային Գործադիր Կոմիտեն։

8. Խորհուրդների գավառակային Համագումարը յուր աշխատանքները ղեկավարելու համար յուր կազմից ընտրում է նախագահություն։

9. Խորհուրդների գավառակային համագումարներն իրենց իրավասության վերաբերյալ խնդիրների քննության համար կարող են կազմել հանձնաժողովներ ու սեկցիաներ։

10. Խորհուրդների գավառակային Համագումարն ընտրում է մանդատային հանձնաժողով՝ կատարված ընտրությունների և յուր անդամների ունեցած լիազորություններն ստուգելու համար։

11. Գավառակային համագումար հրավիրելու որվա և նրա որակարգի մասին Գավառակային Գործադիր Կոմիտեները վաղորոք տեղեկացնում են այն խորհուրդներին, վոր իրենց ներկայացուցիչները պիտի ուղարկեն խորհուրդների գավառակային Համագումարին։

ՀԱՏՎԱԾ II

ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.

12. Խորհուրդների գավառակային համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում գավառակի իշխանության բարձրագույն մարմինն է յուր իրավասության սահմաններում Գավառակային Գործադիր Կոմիտեն։

13. Գավառակային Գործադիր Կոմիտեների խնդիրներն են.

ա. գավառակի սահմաններում յեղած բոլոր խորհրդային մարմինների և հիմնարկությունների գործունեության ղեկավարությունը, ուղղություն տալն ու միավորումը, բացի այն հիմնարկություններից, վոր ընդհանուր գավառային և ավելի յայն նշանակություն ունին և վորոնց նկատմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեների իրավունքները սահմանափակվում են նրանով, վոր լսում ու քննում են այդ մարմինների ու հիմնարկությունների գործունեության տեղե-

կազմները և իրենց յեզրակացությունները նրանց գործունեության առթիվ ներկայացնում են Գավառային Գործադիր Կոմիտեին.

բ. Գավառակային Գործադիր Կոմիտեների ընթացիկ գործունեության վերաբերյալ խնդիրները.

գ. իշխանության վերադաս մարմինների դեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները կիրարկության դնելը.

դ. գյուղական խորհուրդների և խորհուրդների գավառակային համագումարի ընտրությունների ղեկավարությունը.

ե. պայքար հակահեղափոխության դեմ և հեղափոխական կարգի, անդորրության և ապահովության պաշտպանությունը գավառակի սահմաններում։

14. Գավառակային Գործադիր Կոմիտեներն իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար իրավունք ունին.

ա. անմիջական հարաբերություն ունենալու գավառային հիմնարկությունների հետ՝ գավառակի վերաբերմամբ նրանց ձեռնարկած միջոցների մասին.

բ. Գավառային Գործադիր Կոմիտեի և իշխանության գավառային այլ մարմինների նիստերին գավառակի գործերի մասին զեկուցողներ ուղարկելու.

գ. Գավառային Գործադիր Կոմիտեի միջոցով դիմումներ անելու իշխանության վերադաս մարմինների այն վորոշումները վերացնելու կամ փոխելու մասին, վոր տեղական պայմանների հաշվառման աննպատակահարմար են համարում.

դ. Ջնջելու, փոխելու կամ կասեցնելու Գավառակային Գործադիր Կոմիտեներին յենթակա հիմնարկությունների վորոշումներն ու կարգադրությունները.

ե. յեզրակացություններ տալու իշխանության վերադաս մարմիններին՝ տվյալ գավառակի վերաբերյալ գործերի առթիվ արված բոլոր դիմումների մասին.

զ. ղեկավարելու և ուղղություն տալու գավառակի մունիցիպալ գործունեությանը.

ը. իրականացնելու գավառակի դպրոցների, հիվանդանոցների, յերթևեկների բուժարանների, ագրոնոմիական, անասնաբուժական և զուգավորման կայանների գործունեության ուղղության ընդհանուր ղեկավարությունը, ի բաց առյալ ցուցադրական հիմնարկությունները, այլ և այն հիմնարկությունները, վոր կարող են

հանվել Գավառակային Գործադիր Կոմիտեի իրավասությունից Գավառային Գործադիր Կոմիտեի կամ վերադաս մարմինների հատուկ վորոշմամբ։

թ. հաշվետվություն պահանջելու անտառապահներից իրենց գործունեության մասին և վերահսկելու նրանց վրա.

ժ. համաձայնեցնելու՝ գոյություն ունեցող որենքների համեմատ, գավառային գործադիր կոմիտեների բաժինների ներկայացուցիչների գործունեությունը.

ի. գավառակի պաշտոնյաներ նշանակելու և պատճառաբանված մերժումն հայտնելու այն աշխատավորների նկատմամբ, վորոնց Գավառային Գործադիր Կոմիտեի բաժինները նշանակում են գավառակի համար.

լ. իրենց իրավասության սահմաններում պարտադիր վորոշումներ հրատարակելու, վոր չպիտի հակասեն գործող որենքներին.

խ. վարչական կարգով պատիժներ նշանակելու Գավառային Գործադիր Կոմիտեի հրատարակած պարտադիր վորոշումները խախտելու համար, յեթե Գավառակային Գործադիր Կոմիտեի այդ իրավունքը նախատեսված լինի Գավառային Գործադիր Կոմիտեի հրատարակած պարտադիր վորոշումներով, այլ և Գավառակային Գործադիր Կոմիտեի հրատարակած պարտադիր վորոշումները խախտելու համար.

ծ. կարգապահական պատիժների յենթարկելու Գավառակային Գործադիր Կոմիտեի ատորադրյալ պաշտոնյաներին.

Ծանոթ. Պարտադիր վորոշումներ հրատարակելու կարգը սահմանվում է Կենտգործկոմի հատուկ վորոշմամբ։

15. Գավառակային Գործադիր Կոմիտեներին հանձնվում է գավառակի գյուղական խորհուրդների գործունեության ղեկավարությունն ու վերահսկողությունը։ Մասնավորապես՝ գավառակային Գործադիր Կոմիտեները պարտավոր են՝

ա. հաղորդել գյուղական խորհուրդներին կառավարության բոլոր վորոշումներն ու կարգադրությունները.

բ. պարբերաբար քննել և հրահանգել գյուղական խորհուրդների գործունեությունը՝ կառավարչության զանազան ճյուղերի և գործավարության վերաբերմամբ.

գ. պարբերաբար գյուղական խորհուրդների նախագահների խորհրդակցություն գումարել.

դ. գյուղական խորհուրդների նախագահներին Գավառակային Գործադիր Կոմիտեյի նիստերին հրավիրել.

ե. գյուղական խորհուրդներին իրազեկ անել Գավառակային Գործադիր Կոմիտեի տնօրինությունների մասին՝ Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամների գյուղական խորհուրդների նիստերումն արած պարբերական զեկուցումներով.

զ. Գավառակային Գործադիր Կոմիտեների և գյուղական խորհուրդների միացյալ նիստեր գումարել.

ը. առաջարկել գյուղական խորհուրդներին ի նախնական քննություն գավառակի կամ տվյալ գյուղի համար եական նշանակություն ունեցող անորենությունների նախագծերը։

16. Գավառակային Գործադիր Կոմիտեները, իրավական անձի իրավունքներ վայելելով, կարող են հանձնառություններ ստանձնել և պայմանագրերով տնտեսական փոխհարաբերությունների մեջ մտնել՝ Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հատուկ հրահանգով վորոշված սահմաններում։

4. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

17. Կառավարչության գործի վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեների վրա է դրվում.

ա. հեղափոխական իրավակարգի պահպանությունը, քրեական և այլ հանցագործությունները կանխելն ու նրանց դեմ պայքարելը.

բ. գավառակի սահմաններում գոյություն ունեցող որենքների համաձայն վարչական քննություններ ու հետաքննություններ կատարելը միլիցիայի միջոցով, մասնավորապես պայքարի միջոցներ կազմակերպելը ամեն տեսակ թաքստոցների, բաղդախաղերի, գաղտնի ողեգործության, հարբեցողության և վոգելից ըմպելիքների ապորինի վաճառքի ու գործածության դեմ.

գ. հսկողություն գավառակի սահմաններում գոյություն ունեցող և գործող որենքների հիման վրա նոր կազմվող ընկերությունների և միությունների գործունեության վրա.

դ. հսկողություն պարբերական հրատարակությունների, այլ և տպագրական յերկերի տարածման ու վաճառքի վրա.

ե. յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելու վերաբերյալ դեկրետների գործադրությունը կյանքի մեջ և հսկողություն նրանց կատարման վրա.

զ. հսկողություն, վոր ստրկացուցիչ գործարքներ տեղի չունենան, և այդպիսի գործարքների մասին վարչական և դատական իշխանության բարձրագույն մարմիններին հաղորդելը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար.

ը. բնակչության հաշվառությունը, գաղթականների և ոտարյերկրացիների տոմարագրությունը, այլ և ընտրական և այլ իրավունքներից զրկված անձանց տոմարագրությունը.

թ. աջակցություն փոստային գործողություններին և գավառակի սահմաններում փոստը ժամանակին տեղափոխելուն.

ժ. հսկողություն գավառակի ապահովագրության գործակալների գործունեության վրա և կոպարավոր ապահովագրության տուրքերի գանձմանն աջակցելը.

ի. տարերային աղետների դեմ հասարակական պայքար մղելու միջոցներ կազմակերպելն ու գործադրելը. հսկողություն գյուղերի և անտառների հրդեհների առաջն առնելու համար սահմանված միջոցների գործադրության վրա.

լ. քաղաքացիներին անձնագրեր և այլ անհրաժեշտ վկայականներ տալը.

խ. գավառակի սահմաններում քաղաքացիական վիճակի ակտերի արձանագրության ղեկավարությունը.

ծ. պատշաճ դեպքերում անձանց և գույքի վրա խնամակալություն կարգելը.

կ. որենքներով սահմանված կարգով գործարքներ, պայմանագրեր և փաստաթղթեր վավերացնելը.

հ. գավառակի վիճակին վերաբերյալ վիճակագրական և տեղեկատվության նյութեր ժողովելը և Գավառային Գործադիր Կոմիտեին ներկայացնելը.

ձ. աջակցություն կատավոր վիճակագիր թղթակիցների ցանց կազմակերպելուն։

18. Զինվորական գործի նկատմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեի վրա է դրվում.

ա. զինվորական վարչության մարմինների ցուցմունքների թե հերթական և թե զորաժողովի առթիվ զորակոչ իրականացնելը.

բ. զինապարտների հաշվառությունն ու համապատասխան վկայականներ տալը.

գ. ձիերի հաշվառությունն ու դրա հետ կապված բոլոր ստուգողական գործողությունները.

դ. աշխատավորների նախազորակոչային և արտազորյա պատրաստության վերաբերյալ տնօրինությունների իրագործումը.

ե. անցնող զորամասերին օթևան և տեղական զինվորական հիմնարկությունների համար կացարաններ հատկացնելը.

զ. դասալիքների վերաբերմամբ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելը։

19. Ֆինանսա-հարկային գործի նկատմամբ գավառակային Գործադիր Կոմիտեի իրավասությանն է պատկանում՝ տեղական ֆինանսների վերաբերյալ կանոնադրության համեմատ.

ա. գավառակային բյուջե կազմելը և գավառակային Համագումարին ի քննություն ու Գավառային Գործադիր Կոմիտեին ի հաստատություն ներկայացնելը, այլ և Գավառային Գործադիր Կոմիտեի հաստատած գավառակային բյուջեն ի կատար ածելը։

բ. գավառակային բյուջեի վերաբերյալ հաշվապահությունն ու հաշվետվությունը.

գ. գավառակի սահմաններում պետական և տեղական հարկերը ժամանակին գանձելու համար միջոցներ ձեռք առնելը, հսկողությունն ու ընդհանուր ղեկավարությունը.

դ. պայքար հարկերի ապառիկ մնալու դեմ և միջոցներ ձեռք առնելը չարամտությամբ հարկ չվճարողներին սահմանված կարգով պատասխանատվության յենթարկելու համար.

ե. տեղական գավառակային կարիքների համար միջոցներ գտնել գործող օրենքների սահմաններում.

զ. Գավառակային Գործադիր Կոմիտեից, տեղական նշանակություն ունեցող ձեռնարկություններից և այլ աղբյուրներից ստացվող հասույթների տնօրինությունը.

ը. գավառակի գյուղական խորհուրդների յելնմից նախահաշիվների քննություն ու տեղական բյուջեի մեջ մտցնելը.

թ. գյուղական խորհուրդներին հրահանգելը ֆինանսական և հարկային աշխատանքի խնդիրների վերաբերմամբ՝ գավառակի սահմաններում.

ժ. հսկողություն հողային հանձնաժողովների գործերի համար դրոշմատուրքի, դիվանական ծախքերի և դատական տուրքերի կանոնավոր գանձման վրա.

ի. օրենքով չսահմանված հարկերի ու տուրքերի գանձումը թույլ չտալը.

լ. յեկամտա-ստացվածային հարկ վճարողների հաշվառությունը, այլ և գավառակի առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառությունն ու ստուգումը։

20. Գյուղատնտեսության վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն՝

ա. հսկում և աջակցում է գավառակի ագրոնոմիական և հողաշինարարական պաշտոնեության աշխատանքին, այլ և միջոցներ է ձեռք առնում հողաշինարարական աշխատանքները ընդարձակելու և արագացնելու համար, հսկելով բնակչության չքավոր մասի շահերի պաշտպանության տեսակետից այդ աշխատանքների վրա.

բ. միջոցներ է ձեռք առնում ոգտակար մշակույթների տարածությունն ընդարձակելու և սերմացուի վորակն ազնվացնելու համար։

գ. հետևում է, վոր պետական հողային գույքերն ոգտագործվին ըստ իրենց նշանակության, հաշվի է առնում պետական գույքերն ու տոմարագրում է հողերը.

դ. հսկում է հողային հանձնաժողովների, այլ և իշխանության այլ մարմինների՝ հողի ոգտագործման խնդիրների վերաբերյալ վճիռների գործադրության վրա.

ե. աջակցում է հողի բարելավման ընկերությունների կազմակերպության, այլ և հսկում է հողի բարելավման աշխատանքների վրա գավառակի սահմաններում.

զ. կազմակերպում և գործադրում է միջոցներ գյուղատնտեսության արտադրականությունը զարգացնելու համար և մասնավորապես միջոցներ է մշակում հավաքական տնտեսությունների արտադրական կոոպերատիվներ կազմելու գործը բարելավելու և ուժեղացնելու համար.

ը. կազմակերպում է գավառակային սերմացուի ֆոնդեր, վարում է նրանց բաշխման գործը, կազմակերպում է հացահատիկների շտեմարաններ և անմիջականորեն ղեկավարում է գյուղատնտեսական կամպանիաները.

թ. միջոցներ է ձեռք առնում անասնապահությունը բարելավելու համար (մասնավորապես աջակցում է զուգավորման կայանների կազմակերպությանը), հսկում է գավառակի անասնաբուժա-

կան պաշտոնեության գործունեության վրա և աջակցում է բնակչությանն անասնաբուժական ոգնություն ցույց տալու գործին.

ժ. պայքար է կազմակերպում գյուղատնտեսական մշակույթների վնասատուների դեմ.

ի. հսկում է պետական և տեղական անտառային տնտեսության կանոնավորության վրա գավառակի սահմաններում.

լ. հետևում է, որ կատարվին բնակչությանը փայտեղեն բաց թողնելու և անտառների խելացի ոգտագործման կանոնները և անտառային կանոնագրքում սահմանված արտոնությունները. այլ և միջոցներ է ձեռք առնում անտառներից ծառեր և փայտեղեն հափշտակելու դեմ մաքառելու համար.

խ. հետևում է, որ կատարվին վորսորդության և ձկնորսության համար սահմանված կանոններն ու ժամանակները.

ծ. հսկում է հողերի աշխատավորական վարձակալության կանոնավորության վրա և սահմանում է այդ վարձակալության պայմանաժամերը՝ Հ. Ս. Խ. Հ. Հողային Որենագրքի 28 և հաջորդ հոդվածների համաձայն։

21. Արդյունաբերության, առևտրի և կոոպերացիայի վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն՝

ա. կազմակերպում և ղեկավարում է Գավառակային Գործադիր Կոմիտեի տրամադրության տակ գտնվող ձեռնարկությունները.

բ. հսկում է, որ կատարվին առևտրի վերաբերյալ կանոնները և մասնավորապես՝ որ պահպանվին վորոշ կարգի ապրանքների համար սահմանված մեծաքանակ վաճառքի և մանրածախի գները.

գ. աջակցում է կոոպերատիվ մարմինների մթերքներ հավաքելու գործին.

դ. աջակցում է կոոպերացիայի բոլոր տեսակներին.

ե. իրագործում է տեղական նշանակություն ունեցող շուկաների, վաճառանոցների և առևտրավաճառների վերաբերմամբ սահմանված հսկողությունը։

22. Աշխատանքի վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն՝

ա. հետևում է, որ գավառակի սահմաններում ժամանակին և ճշտությամբ կատարվին աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող օրենքներն ու իշխանության կենտրոնական մարմինների կարգադրությունները.

բ. աջակցում է արհեստակցական կազմակերպությունների գործունեությանը.

23. Բարեկարգության վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն՝

ա. հետևում է, որ կատարվին շինարարական կանոնները.

բ. հսկում է տեղական գավառակային նշանակություն ունեցող ճանապարհների և կամուրջների բարեկարգ վիճակի և ժամանակին նորոգելու վրա, այլ և հետևում է, որ բարեկարգ վիճակի մեջ լինին գավառային և պետական նշանակություն ունեցող ճանապարհներն ու կամուրջները.

գ. անհրաժեշտ միջոցներ է ձեռք առնում հրդեհների դեմ և հրդեհներից պաշտպանելու գործն է կազմակերպում.

դ. կազմակերպում է գանգան ձեռնարկություններ հասարակական ոգտագործման համար և մասնավորապես աջակցում է գյուղի էլեկտրոֆիկացիայի գործին գավառակի սահմաններում.

ե. հաշվի է առնում և ոգտագործում է յուր տրամադրության տակ լեղած հասարակական գույքը։

24. Կուլտուրա-կրթական աշխատանքի, առողջապահության և սոցիալական ապահովության վերաբերմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն՝

ա. հսկում է, որ բարեկարգ վիճակի մեջ պահպանվի դպրոցների գոյություն ունեցող ցանցը և միջոցներ է ձեռք առնում այն ընդարձակելու համար.

բ. ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցներն անգրագիտությունը վերացնելու համար՝ անգրագիտության վերացման կայաններ կազմակերպելով ու պահպանելով և բնակչության կուլտուրական վիճակը բարձրացնելով.

գ. աջակցում է գավառակի քաղաքական լուսավորության գործին՝ կազմակերպելով և պահպանելով խրճիթ-ընթերցարաններ, շարժական գրադարաններ և այլն.

դ կազմակերպում է գավառակի սահմաններում նախադպրոցական հիմնարկություններ.

ե. միջոցներ է ձեռք առնում բնակչության մեջ խորհրդային հրատարակություններ տարածելու համար, վորոնց թվում նա-

յեվ հրատարակություններ տեղական ազգային փոքրամասնության լեզուներով.

զ. աջակցում է բոլոր բժշկա-սանիտարական հիմնարկությունների կազմակերպությանը (հիվանդանոցների, յերթեվեկների բուժարանների, բժշկական և բուժական կայանների և այլ բժշկա-սանիտարական հիմնարկությունների) գավառակի սահմաններում, հսկում է նրանց գործունեության վրա և պահում է գավառական բյուջեի կանոնների համաձայն.

ը. աջակցում է վարակիչ հիվանդությունները կանխելու միջոցներին և նրանց դեմ պայքար կազմակերպելուն, այլ և սանիտարական հսկողություն կազմակերպելուն.

թ. միջոցներ է ձեռք առնում բնակչության մեջ սանիտարական լուսավորության գիտելիքներ տարածելու համար.

ժ. միջոցներ և ձեռք առնում գյուղական բժշկա-սանիտարական ցանցն ընդարձակելու համար.

ի. հոգ է տանում մայրության և մանկության պաշտպանություն կազմակերպելու մասին.

լ. իրագործում է վարակիչ հիվանդությունները կանխելու և նրանց դեմ մաքառելու համար ձեռք առնված միջոցները.

խ. միջոցներ է ձեռք առնում ապահովելու գավառակի բժշկական անձնական կազմը փոխադրական միջոցներով՝ նրանց շրջագայության ժամանակ.

ծ. աջակցում է գյուղական բնակչության ինքնագործունեության զարգացման գործին՝ կուլտուր-կրթական և բժշկա-սանիտարական հիմնարկությունների բոլոր անհրաժեշտ կարիքները հոգալու համար.

կ. հաշվի է առնում հաշմանդամներին, կարմիր զինվորների և ռազմաճակատում սպանված անձանց ընտանիքները.

հ. հսկում է, որ կատարվին հաշմանդամների, կարմիր զինվորների և ռազմաճակատում սպանվածների ընտանիքների, զորացրման յենթարկվածների և նրանց ընտանիքների ոգնության վերաբերյալ օրենքներն ու կանոնները, այլ և աջակցում է հաշմանդամների արտելների գործունեության կազմակերպությանը.

ձ. ոգնություն և կազմակերպում տակավոր տնտեսություններին, մանավանդ հավաքական ոգնության միջոցներով (համայնական վար, հունձ և այլն).

ղ. ամեն կերպ աջակցում է փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերություններին և հսկում է նրանց գործունեության վրա։

25. Դատական-քննչական գործի նկատմամբ Գավառակային Գործադիր Կոմիտեն.

ա. հետևում է՝ դատական քննչական մարմինների գործունեությանը՝ տեղեկատու զեկուցումների հիման վրա և աջակցումեն դատական-քննչական մարմիններին՝ իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար.

բ. սահմանված կարգով ներկայացնում է Գավառային Գործադիր Կոմիտեին ի հաստատություն ժողովրդական տեսչարանների ցուցակները.

գ. աջակցում է բնակչության իրավաբանական ոգնության կազմակերպությանը.

5. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

26. Գավառակային Գործադիր Կոմիտե ընտրում է խորհրդների գավառակային Համագումարը մի տարով։ Կոմիտեի նիստերը գումարվում են առնվազն շաբաթը մի անգամ։

27. Գավառակային Գործադիր Կոմիտեն բաղկացած է 5—9 անդամից և 2 փոխանդամից.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառակային Գործկոմների անդամների թիվը՝ Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի հրահանգի հիման վրա, վորոշվում է բնակչության թվի համեմատ։

28. Գավառակի համար առանձին կարևորություն ունեցող յենթադրությունները, այլ և Գավառակային Գործադիր Կոմիտեի զեկուցումներն ու տեղեկագրները լսելու և հաստատելու համար, առնվազն յերկու-յերեք ամիսը մի անգամ, գումարվում են Կոմիտեի ընդլայնված նիստեր, վորոնց մասնակցում են Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամներն ու փոխանդամները, այլ և խորհրդակցական ձայնով՝ գավառակի սահմաններում գործող խորհուրդների նախագահները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Գավառակային Գործադիր Կոմիտեների ընդլայնված նիստերին խորհրդակցական ձայնով պիտի հրավիրվեն գավառակի սահմաններում գտնվող արհեստակցական կազմակերպությունների, գործարանների, այլ և փոխադարձ ոգնության գավառակային գյուղացիական ընկերության ներկայացուցիչները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Գավառակային Գործադիր Կոմիտեի թե ընդլայնված և թե հերթական նիստերին, Կոմիտեի թույլտվությամբ, կարող են ներկա լինել գավառակի սահմաններում գտնվող այն պետական հիմնարկությունների, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք յենթակա չեն Գավառակային Գործադիր Կոմիտեին, և կանանց պատգամավորական ժողովների ներկայացուցիչները։ Հիշյալ հիմնարկությունների ու ձեռնարկությունների շահերը շոշափող խնդիրների վերաբերմամբ նրանց ներկայացուցիչները խորհրդակցական ձայնի իրավունք են վայելում։

29. Գավառակային Գործադիր Կոմիտեի աշխատանքը բաշխվում է նրա անդամների միջև, բայց վարչական ու գինվորական գործը գավառակում վարում է անմիջականորեն Գավառակային Գործադիր Կոմիտեի նախագահը։

30. Գավառակային Գործադիր Կոմիտեներն, իբրև ընդհանուր կանոն, բաժիններ չունին. բացառիկ դեպքերում այդպիսի բաժիններ կարող են կազմել Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի թույլտվությամբ։

31. Գավառակային Գործադիր Կոմիտեին առընթեր կազմակերպվում է դիվանատուն և ֆինանսա-հարկային մասն։ Դիվանատունը ղեկավարում է Գավառակային Գործադիր Կոմիտեի քարտուղարը։

Ֆինանսա-հարկային մասը վարում է անմիջականորեն Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամներից մեկը։

32. Գավառակային Գործադիր Կոմիտեի շտատները հաստատում է Գավառային Գործադիր Կոմիտեն։

33. Գավառակային Գործադիր Կոմիտեի գործավարության և հաշվետվության կարգը վարվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության մասնավոր հրահանգով։

34. Գավառակի կենտրոնում քաղաքային խորհուրդ յեղած դեպքում Գավառակային Գործադիր Կոմիտեն հանդիսանում է վարպես նրա գործադիր մարմինը. այդպիսի դեպքում քաղաքի վերաբերյալ բոլոր տեխնիկական աշխատանքը կատարում է Գավառակային Գործադիր Կոմիտեի դիվանատունը։

35. Գավառակային Գործադիր Կոմիտեի բոլոր նիստերի համար արձանագրություններ են կազմվում։

6. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

36. Գավառակային Գործադիր Կոմիտեի նախագահին ընտրում է ինքը Կոմիտեն իր անդամներից։

37. Գավառակային Գործադիր Կոմիտեի այս կամ այն վրճիռը և վերադաս մարմինների կարգադրությունները կատարելու համար Գավառակային Գործադիր Կոմիտեի նախագահը ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ գործնական միջոցները, որոնք պարտադիր են գավառակի սահմաններում գտնվող բոլոր հիմնարկությունների, ձեռնարկությունների և անձանց համար, և յուր ձեռք առած միջոցների մասին տեղեկություն է տալիս Գավառակային Գործադիր Կոմիտեին առաջիկա նիստում։

38. Գավառակային Գործադիր Կոմիտեի բոլոր անդամները պարտավոր են հաճախել Գավառակային Գործադիր Կոմիտեի նիստերը և չեն կարող հրաժարվել Գավառակային Գործադիր Կոմիտեի իրենց վրա դրած պարտականություններից։

39. Գավառակային Գործադիր Կոմիտեի նախագահն ու անդամներն իրավունք ունին մասնակցելու Կոմիտեին յենթակա գավառակի սահմաններում գործող հիմնարկությունների ու կազմակերպությունների նիստերին ու խորհրդակցություններին։

40. Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամները կարող են հանդես գալ Գործադիր Կոմիտեի անունից՝ յուրաքանչյուր առանձին դեպքում լիազորություն ունենալով Գավառակային Գործադիր Կոմիտեից։

41. Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամներին յերեք անգամ առանց հարգելի պատճառների Կոմիտեի նիստերից բացակայելու համար Գավառակային Գործադիր Կոմիտեն կարող է կարգապահական պատժի յենթարկել։

42. Գավառակային Գործադիր Կոմիտեի քարտուղարին հաստատում է Գավառային Գործադիր Կոմիտեի նախագահությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառակային Գործադիր Կոմիտեի քարտուղարը կարող է և Գավառակային Գործադիր Կոմիտեի անդամ չլինել։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ

Հաստատված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից
1925 թ. մարտի 16-ին

ՀԱՏՎԱԾ I.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1. Խորհուրդների Գավառային Համագումարը խորհրդային իշխանության բարձրագույն մարմինն է գավառի սահմաններում և կազմվում է գավառի սահմաններում գտնված բոլոր խորհուրդների ներկայացուցիչներից, գյուղական խորհուրդներից՝ 1000 բնակչին մի պատգամավոր, այլև համաձայն ՀՍԽՀ Սահմանադրության 51-րդ հոդ.՝ քաղաքային խորհուրդներից, այն հաշվով, որ համագումարների անդամների ընդհանուր թիվը 250-ից ավելի չլինի:

Եթե Խորհուրդների Գավառային Համագումարից անմիջապես առաջ տեղի ունենա Խորհուրդների Գավառակային Համագումարը, գյուղական խորհուրդների ներկայացուցիչների ընտրությունը կատարվում է գավառակային համագումարներում:

Խորհուրդների Գավառային Համագումարի պատգամավորների ընտրությունը կատարվում է ՀՍԽՀ Սահմանադրությամբ և ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հրահանգով սահմանված կարգով:

2. Խորհուրդների Գավառային Համագումարը հրավիրում է Գավառային Գործադիր Կոմիտեն տարին մի անգամ՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի սահմանած ժամանակին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արտակարգ համագումարներ հրավիրվում են կամ Գավառային Գործադիր Կոմիտեյի հայեցողությամբ կամ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա նախագահության առաջարկությամբ կամ թե տվյալ գավառի ամբողջ բնակչության վոչ պակաս քան 1/3-ը պարունակող վայրերի խորհուրդների պահանջմամբ:

3. Խորհուրդների Գավառային Համագումարը յուր աշխատանքը ղեկավարելու համար ընտրում է նախագահություն, վորի

լիազորությունները վերջանում են Համագումարի պարապմունքներն ավարտվելու հետ միասին:

4. Խորհուրդների Գավառային Համագումարն ընտրում է մանդատային հանձնաժողով, վոր ստուգում է պատգամավորների լիազորությունները և վորոշում է Համագումարի յուրաքանչյուր անդամի խորհրդակցական կամ վճռական ձայնով մասնակցելու իրավունքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մանդատային հանձնաժողովի վորոշումները վերջնականապես հաստատում է Համագումարը:

5. Գավառային Համագումարի պարտականությունն է՝

ա) Խորհուրդների Գավառային Համագումարին յենթակա գավառային իշխանության բոլոր մարմինների գործունեության ղեկավարությունն ու ներդաշնակումը (Համագումարի ժամանակաշրջանում).

բ) Հաստատությունը Գավառային Գործադիր Կոմիտեյի առաջարկած՝

աա) Մուտքի և ելքի բաշխման՝ գավառային, քաղաքային և գավառակային բյուջեների միջև, գործող որենքների համաձայն.

բբ) Տեղական հարկերի և տուրքերի կոպարների՝ համաձայն գոյություն ունեցող որենդրության.

գ) Գավառային բյուջեյի և քաղաքային Խորհրդի ընդունած գավառային քաղաքի բյուջեյի քննությունն ու հաստատությունը, այլ և գավառի և գավառային քաղաքի բյուջեների կատարման հաշվետվության քննությունն ու հաստատությունը.

դ) Համապետական նշանակություն ունեցող խնդիրների քննությունը և նրանց վերաբերմամբ վորոշումների նախագծեր մշակելը, վոր պիտի հղվեն իշխանության վերադաս մարմիններին ի քննություն և ի հաստատություն.

ե) Գավառային Գործադիր Կոմիտեյի և յուր բաժինների տեղեկագրերի քննությունն ու հաստատությունը, գավառի խորհրդային իշխանության մարմինների հետագա գործունեության ծրագրերի հաստատությունը, այլ և կենտրոնական խորհրդային իշխանության այն մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկագրերն ու զեկուցումները լսելը, վոր գտնվում են գավառի սահմաններում և չեն յենթարկվում Գավառային Գործադիր Կոմիտեյին.

գ) Խորհուրդների Համահայաստանյան Համագումարի պատգամավորների ընտրությունը՝ ՀՍԽՀ Սահմանադրության 52 հոդ. համաձայն.

ը) Գավառային Գործադիր Կոմիտեյի անդամների և փոխանդամների ընտրությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խորհուրդների գավառային Համագումարը բացի վերոհիշյալ խնդիրներից կարող է լուծել դուռ տեղական, տվյալ գավառի համար նշանակություն ունեցող բոլոր այլ խնդիրները:

6. Խորհուրդների գավառային Համագումարի վճիռները համագումարի որակորդի մեջ յեղած զեկուցումների վերաբերմամբ՝ արվում են վորոշումների և բանաձևերի ձևով:

Խորհուրդների գավառային Համագումարի որակորդը մշակում է Գավառային Գործադիր Կոմիտեն և վոչ ուշ քան համագումարից մի ամիս առաջ ներկայացնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, հրապարակում է մամուլի մեջ, այլ և ուղարկում է բոլոր Գավառակային Գործադիր Կոմիտեներին և քաղաքային խորհուրդներին:

7. Խորհուրդների գավառային Համագումարում բոլոր խնդիրները վճռվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

8. Գավառային Գործադիր Կոմիտեն Խորհուրդների Գավառային Համագումարի բոլոր վորոշումներն ու արձանագրություններն ուղարկում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը:

9. Խորհուրդների Գավառային Համագումարի վորոշումները կարող են բեկանել Խորհուրդների Համահայաստանյան Համագումարը, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և նրա Նախագահությունը:

10. Խորհուրդների Գավառային Համագումարի անդամներն իրենց պարտականությունները կատարում են ձրիաբար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խորհուրդների Համագումարի ժամանակ Համագումարի պատգամավորների ապրուստի և ճանապարհի ծախքերը հոգացվում են օրենքով վորոշված կարգով:

ՀԱՏՎԱԾ II.

Գլուխ 1.

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11. Գավառային Գործադիր Կոմիտե ընտրում է Խորհուրդների գավառային Համագումարը մի տարի ժամանակով: Գավառային Գործադիր Կոմիտեն, յուր իրավասության սահմաններում, գավառի իշխանության բարձրագույն մարմինն է համարվում, գումարների միջանկյալ ժամանակամիջոցում և յենթարկվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին ու նրա Նախագահությանը և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործադիր Կոմիտեից անդամների դուրս գալու դեպքում նրանց փոխարինում են խորհուրդների Գավառային Համագումարի ընտրած փոխ-անդամները՝ Համագումարի սահմանած կարգով:

12. Գործադիր Կոմիտեն և յուր Նախագահությունն իրավունք ունին պարտադիր վորոշումներ հրատարակելու իրենց իրավասության խնդիրների վերաբերմամբ, գործող օրենքների համաձայն:

13. Գավառային Գործադիր Կոմիտեյի վորոշումներն ու կարգադրությունները պարտադիր են բնակչության ու գավառային խորհրդային իշխանության բոլոր մարմինների և ստորադաս գործկոմների համար: Այդ վորոշումներն ու կարգադրություններին կարող են բեկանել Խորհուրդների Գավառային Համագումարը, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ու նրա Նախագահությունը և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

14. Գավառային Գործադիր Կոմիտեն ընտրվում է 11–15 անդամի և 5 փոխանդամի կազմով: Գործադիր Կոմիտեյի նիստերը գումարվում են ամիսն առնվազն մի անգամ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կենտրոնական Գործադիր Կոմիտեի վորոշմամբ մեծաթիվ բնակչություն ունեցող խոշոր գավառներում Գավառային Գործադիր Կոմիտեի կազմը կարելի յե ավելացնել մինչև 20 հոգի:

15. Գավառային Գործադիր Կոմիտեյի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Գավառային Գործադիր Կոմիտեյի բաժինների և ընդհանուր բաժնի բաժանմունքների վարիչները, նույնիսկ յեթե նրանք Գործադիր Կոմիտեյի անդամներ չեն: Բացի դրանից՝ Գավառային Գործադիր Կո-

միտեյի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են գավառային գատախազը, միլիցիայի գավառային վարչության պետը և գավառային տեղեկատու վիճակագրական բյուրոյի վարիչը:

16. Գավառային Գործադիր Կոմիտեն՝ յուր վորոշումները, այլ և իշխանության վերադաս մարմինների վորոշումները կյանքի մեջ կիրարկելու, ինչպես նաև իրեն ստորադրյալ մարմինների գործունեությունը ղեկավարելու, ուղղություն տալու և միավորելու համար յուր անդամներից նախագահություն է ընտրում 3—5 հոգուց բաղկացած:

17. Գավառային Գործադիր Կոմիտեն՝ բացի ընդհանուր նիստերից, գումարում է նաև նստաշրջանային (ընդլայնված) նիստեր, Գավառակային Գործադիր Կոմիտեների, քաղաքային խորհուրդների և արդյունաբերական շրջանների ներկայացուցիչների մասնակցությամբ: Գավառային Գործադիր Կոմիտեյի նստաշրջանային նիստերը գումարվում են առնվազն յերեք ամիսը մեկ անգամ՝ գավառային Գործադիր Կոմիտեյի գործունեության այլ և այլ ճյուղերի վերաբերյալ կարևորագույն խնդիրների ու զեկուցումների քննության համար:

18. Գավառային Գործադիր Կոմիտեն և յուր նախագահությունը պատասխանատու և հաշվետու են խորհուրդների գավառային և հանրապետական համագումարների, Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա Նախագահության առաջ:

19. Գավառային Գործադիր Կոմիտեյի պարտականությունն է կենտրոնական իշխանության դեկրետների և կարգադրությունների գործադրությունը գավառի սահմաններում, վորի համար նրան իրավունք է վերապահվում՝

ա) Անմիջական հարաբերություն ունենալու իշխանության կենտրոնական մարմինների հետ՝ տվյալ գավառի վերաբերմամբ ձեռնարկած միջոցների մասին.

բ) Միջնորդություն հարուցանելու Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության առաջ իշխանության կենտրոնական մարմինների՝ տվյալ գավառի վերաբերյալ վորոշումների և կարգադրությունների փոփոխության մասին.

գ) Կատեցնելու, Գավառային Գործադիր Կոմիտեյի հավաքական դատական պատասխանատվությամբ, ժողովրդական կոմիսարիատների և կենտրոնական այլ հիմնարկությունների կարգադրությունների իրագործումը, յեթե այդ կարգադրությունները չեն համապատասխանում բարձրագույն համապատասխան մարմինների վորոշումներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այդպիսի կարգադրություններ կասեցնելու մասին, նաև այդ կարգադրությունները բեկանելու անհրաժեշտության վերաբերյալ իր յենթադրությունները Գավառային Գործադիր Կոմիտեն անհապաղ հայտնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությանը և համապատասխան ժողովրդական կոմիսարիատին:

դ) Վարչական պատիժներ նշանակելու սույն կանոնադրության 12 հոդվածի հիման վրա հրատարակվող պարտադիր վորոշումների խախտման համար.

ե) Կարգապահական հետաքննություն հարուցանելու՝ գործող օրենքներով իրեն վերապահված իրավունքների սահմաններում, գավառի պաշտոնյաների դեմ.

զ) Վերահսկելու գավառի սահմաններում գործող բոլոր մարմինների և հիմնարկությունների գործունեության որինականության վրա, բացի գործող Կարմիր Բանակի և դատախազության հիմնարկություններից.

ը) Վայելելու իրավական անձի իրավունքներ:

20. Հեղափոխական իրավակարգը և ապահովությունը գավառում պահպանելու, հակահեղափոխական քայլերի, ավազակության ու հանցագործ տարրերի և հասարակական կարգը խանգարելու ամեն տեսակ փորձերի դեմ մաքառելու համար Գավառային Գործադիր Կոմիտեն պարտավոր է՝

ա) Գործել այդ նպատակով յուր տրամադրության տակ յեղած բոլոր միջոցներով, դիմելով զորամասերի գինյալ ուժին, գործող հատուկ օրենքների հիման վրա.

բ) Կանխարգելել միջոցներ ձեռք առնել հանցանք գործած անձանց նկատմամբ, պատշաճ մարմինների ձեռքով խուզարկություններ, գրավումներ և ձերբակալումներ անելու իրավունքով.

գ) Դիմել Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին ու նրա Նախագահությանը՝ գավառի սահմաններում հեղափոխական իրավակարգի պահպանության համար արտակարգ միջոցներ ձեռք առնելու և վերացնելու մասին, գործող օրենքների համաձայն.

դ) Աջակցել միլիցիայի և քրեական հետախուզության դրության բարելավմանը, լավագույն աշխատակիցներ գրավելով նրանց կազմի մեջ.

ե) Հսկողություն ունենալ գավառումն յեղած կալանավայրերի վրա.

զ) Թույլ տալ կամ արգելել ժողովներ, խորհրդակցություններ ու կոնֆերանսներ գումարելը.

ը) Միջոցներ ձեռք առնել յեկեղեցին պետությունից և դրպրոցը յեկեղեցուց անջատելու վերաբերյալ դեկրետն իրագործելու համար.

թ) Հսկողություն ունենալ մամուլի և տեսլարանների, այլ և շահադիտական նպատակներ չունեցող և ընդհանուր կարգով հաստատության և տոմարագրության յենթակա ընկերությունների և միությունների գործունեության վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—20-րդ հոդ. «զ» և «թ» կետերով նախատեսված կանոնները չեն տարածվում արհեստակցական (արտադրական) միությունների վրա, վորոնց տոմարագրությունը և գործունեությունը կարգավորվում են Աշխատանքի Որենսգրքի 151–167 հոդվածներով:

21. Գավառային Գործադիր Կոմիտեի պարտականությունն է հսկողություն ունենալ գավառի գատական հիմնարկությունների գործունեության կանոնավորության և բնակչությանն իրավաբանական ոգնություն հասցնելու գործի պատշաճ կազմակերպության վրա և մասնավորապես՝

ա) Միջոցներ ձեռք առնել գատական հիմնարկությունները չենքերի, այլ և նրանց գործունեության համար՝ դրամական և նյութական միջոցների կողմից ապահովելու համար.

բ) Աջակցել խորհրդատվության գործի կազմակերպության՝ բնակչությանն իրավաբանական ոգնություն հասցնելու համար:

22. Ֆինանսա-հարկային և բյուդջեյի ասպարիզում Գավառային Գործադիր Կոմիտեի պարտականությունն է՝

ա) Տեղական ֆինանսների ամբողջ գործի ղեկավարությունը գավառի սահմաններում, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ցուցմունքների համաձայն.

բ) Խորհուրդների Գավառային Համագումարի իրավասությանը վերապահված բոլոր ֆինանսական գործերի վերաբերյալ յենթադրությունների նախնական քննությունն ու Խորհուրդների Գավառային Համագումարին ի հաստատություն ներկայացնելը.

գ) Գավառի և գավառային քաղաքի հաստատված բյուդջեներն ի կատար ածելը և նրանց կատարման մասին Խորհուրդների Գավառային Համագումարին հաշվետվություն ներկայացնելը.

դ) Գավառակային բյուդջեների և նրանց կատարման հաշվետվության քննությունն ու հաստատությունը.

ե) Հսկողություն, վոր գավառային հիմնարկությունները և ձեռնարկությունները կանոնավոր կերպով ծախսեն պետական և տեղական միջոցները և վոր նրանց արած ծախքերը համապատասխան լինին նախահաշվով սահմանվածներին, վորպեսզի տեղական բյուդջեյի վերաբերյալ անվարկ ծախքեր թույլ չտրվին.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վարկերի համապատասխան տնորենների միջնորդությունների հիման վրա Գավառային, Գործադիր Կոմիտեին իրավունք է վերապահվում վարկերը գավառային, գավառակային, քաղաքային բյուդջեների միևնույն պրակի մի հոդվածից մյուսը տեղափոխելու:

զ) Միջնորդություն հարուցանել Կենտրոնական Գործադիր Կոմիտեի առաջ՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պահեստի Ֆոնդից նպաստ տալու մասին՝ բյուդջեների բացը ծածկելու և լրացուցիչ նախահաշիվներով՝ անակնկալ ծախքերի համար.

ը) Սահմանել գործող որենքների հիման վրա գավառի ծախքերը հոգալու համար հատկացրած տեղական հարկերի և տուրքերի վճարաժամերը.

թ) Միջոցներ ձեռք առնել, վոր պետական և տեղական հարկերն ու տուրքերը ժամանակին և լրիվ մուծվեն գույթները, հարկերն ու տուրքերը և միջոցներ գործադրել անճշտ ֆինժողկոմատի դրամարկղները և միջոցներ գործադրել անճշտապահ վճարողներից ապառիկները գանձելու և նրանց վրա տուգանք դնելու համար՝ գործող որենքների համաձայն, կազմել յել և մտից գավառային նախահաշվի կատարման հաշվետվությունը.

ժ) Պետական հարկերը գանձելու կամպանիաներ անցկացնել, այլ և հավաքած հարկերը պահել.

ի) Քննել ու լուծել տեղական հարկերի ու տուրքերի գործերի վերաբերմամբ Գավառային Գործադիր Կոմիտեների արած վորոշումների դեմ տրվող դանգատները, այդ մասին գոյություն ունեցող որենքների հիման վրա.

լ) Աջակցել Պետական Ապահովագրության մարմիններին և

գավառումն յեղած վարկային և փոխառու–խնայողական հիմնարկութիւնների զարգացմանը:

23. Գավառում գյուղատնտեսութիւնը զարգացնելու նպատակով Գավառային Գործադիր Կոմիտեին և հանձնարարվում հողաշինարարության և հողի ոգտագործման ընդհանուր ղեկավարությունը գավառի սահմաններում, մասնավորապես՝

ա) Միջոցներ ձեռք առնել ոգտակար մշակութիների տարածությունն ընդարձակելու և սերմացուների վորակը բարվոքելու համար.

բ) Աջակցել գյուղացիության համար կենդանի և անշունչ ինվենտար և գյուղատնտեսական մեքենաներ հայթայթող համապատասխան մարմիններին և ձեռնարկություններին.

գ) Ղեկավարել սերմանման կամպանիաները և խոտատեղերի բարելավման աշխատանքները.

դ) Աջակցել փորձացուցադրական դաշտերի, զուգավորման կայանների, բուծարանների, տնկարանների, մեղվանոցների և գավառային նշանակություն ունեցող այլ կուլտուրական հիմնարկությունների կազմակերպությանն ու պահպանությանը.

ե) Աջակցել վարձակալաններ և սերմազտիչ կայաններ, սերմացուի պահեստներ, գյուղատնտեսական ցուցահանդեսներ և մեքենաների ու գործիքների պահեստներ, այլ և հիշյալ մեքենաների նորոգության արհեստանոցներ կազմակերպելուն.

զ) Սահմանել բերքի կարգերն ըստ գավառակների, իսկ բերքի խիստ այլայլության դեպքում նաև ըստ գյուղերի՝ կենտրոնական Գործադիր Կոմիտեի թույլտվությամբ.

ը) Հսկողություն ունենալ անտառների պահպանության և տեղական նշանակություն ունեցող անտառներում անտառային տնտեսություն վարելու վերաբերմամբ Անտառային Որենսգրքի կանոնները իրագործելու և բնակչությանն անտառանյութեր մատակարարելու վրա.

թ) Միջոցներ ձեռք առնել անտառների հրդեհները կանխելու և նրանց վերջ տալու համար.

ժ) Կազմակերպել բնակչությանն ագրոնոմիական և անասնաբուժական ոգնություն ցույց տալու կայանների ցանց.

ի) Ընտրել գավառային հողային հանձնաժողովի նախագահ և փոխնախագահ, հաստատել գավառային և գավառակային հողային հանձնաժողովների կազմը և հսկել նրանց գործունեության կանոնավորության վրա.

լ) Աջակցել քաղաքներին, արդյունաբերական կենտրոններին և այլ հիմնարկությունների՝ սահմանված կարգով հողամասեր հատկացնելուն, այլ և գյուղատնտեսական կոլլեկտիվների, խորհրդային տնտեսությունների, քաղաք–պարտեզների և շինավայր-պարտեզների զարգացմանը.

խ) Ամեն կերպ ոգնել գյուղական աշխատավոր բնակչությանը հողի մշակության և տնտեսության բարելավված յեղանակների կիրարկության գործում:

24. Գավառային Գործադիր Կոմիտեի վրա պարտականություն է դրվում աջակցելու կենտրոնական մարմինների անմիջական տեսչության տակ գտնվող արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների գործունեությանը, ղեկավարելու Գավառային Գործադիր Կոմիտեին անմիջականորեն ստորադրյալ արդյունաբերական ձեռնարկությունների գործառևտրական և արդյունաբերական գործունեությունը, հսկելու մասնավոր տնայնագործական արդյունաբերության գործունեության, այլ և տեղական նշանակություն ունեցող շուկաների և տոնավաճառների վրա, կատարելու կենտրոնական և տնտեսական մարմինների հանձնարարությունները ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի վերաբերմամբ:

25. Աշխատանքի պաշտպանությունը կարգավորելու առպարիզում Գավառային Գործադիր Կոմիտեի վրա պարտականություն է դրվում.

ա) Հսկողություն ունենալու, վոր պետական, հասարակական և մասնավոր ձեռնարկությունները (հիմնարկությունները) կատարեն վարձու աշխատանքի վերաբերյալ որենքներն ու կանոնները և միջոցներ ձեռք առնեն այդ որենքներն ու կանոնները կատարել տալու համար.

բ) Կազմակերպելու միջնորդություն վարձողների ու վարձվողների համար և գործադրկության դեմ պայքարելու միջոցներ ձեռք առնելու.

գ) Հսկողություն ունենալու, վոր գավառի բոլոր ձեռնարկություններում կատարվեն հավաքական պայմանագրերը.

դ) Կազմակերպելու վարձու աշխատանքի կիրարկությու-

նից ծագող կոնֆլիկտների քննությունը (կամավոր և հարկադիր) հաշտարար ատյանների և միջնորդ դատարանների միջոցով.

ե) Հսկելու, վոր գործադրվեն սանիտարական և տեխնիկական կարգադրություններն արդյունաբերական, առևտրական և տնայնագործական ձեռնարկություններում.

զ) Հսկելու աշխատավորների սոցիալական ապահովության իրագործման վրա:

26. Սոցիալական ապահովության ասպարիզում Գավառային Գործադիր Կոմիտեյի պարտականությունն է.

ա) Իրագործել գավառի սահմաններում կենտրոնական մարմինների կարգադրությունները սոցիալական ապահովության վերաբերմամբ.

բ) Ամեն կերպ աջակցել փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերություններին և հսկողություն ունենալ նրանց գործունեության վրա.

գ) Աջակցել հաշմանդամների կոոպերատիվ և աշխատավորական արտելներին.

դ) Հիմնել հաշմանդամների համար հատուկ հիմնարկություններ (արհեստանոցներ, դաղութներ, դպրոցներ և այլն).

ե) Մուրացկանության, անապատանության և պոռնկության դեմ պայքարելու հնարներ հայթայթել և պատշաճ միջոցներ ձեռք առնել.

զ) Հաշվի առնել հաշմանդամներին, կարմիր զինվորների և ռազմաճակատում սպանվածների ընտանիքները:

27. Գավառային Գործադիր Կոմիտեյին է հանձնվում կուլտուր-կրթական տնորինությունների իրագործումը գավառում և գավառի բնակչության կուլտուրական և քաղաքական մակարդակը բարձրացնելու համար ամեն միջոց ձեռք առնելը, և այդ նպատակով նա պարտավոր է.

ա) Միջոցներ ձեռք առնել ապահովելու գավառը դպրոցական, քաղաքական լուսավորության և նախադպրոցական հիմնարկությունների բավականաչափ ցանցով.

բ) Իրագործել անգրագիտությունը վերացնելու համար ձեռնարկած միջոցները.

գ) Միջոցներ ձեռք առնել աշակերտության համար ուսումնական պիտույքներ հայթայթելու.

դ) Հսկողություն ունենալ, վոր դասավանդությունը գավառի սահմաններում գրված լինի կանոնավոր հիմքերի վրա.

ե) Աջակցել կուլտուր-կրթական հիմնարկությունների գործունեությանը, այն է՝ խրճիթ-ընթերցարանների, ժողովրդական տների, ակումբների, դասընթացքների, մանկապարտեզների, հասակավորների դպրոցների, խորհրդային կուսակցական դպրոցների, գրադարանների, ռադիո-կայանների, անգրագիտության վերացման կայանների, թատրոնների, կինեմատոգրաֆների և այլն.

զ) Աջակցել պրոֆեսիոնալ-տեխնիկական և գյուղատնտեսական կրթության հաստատություններին.

ը) Միջոցներ ձեռնարկել մանուկների անապատանության դեմ պայքարելու և մանուկների իրավական պաշտպանությունը կազմակերպելու.

թ) Աջակցել լուսավորության աշխատավորների վորակը բարձրացնելու գործին.

ժ) Աջակցել ժողովրդական լուսավորության խնդիրների վերաբերյալ կոնֆերանսների, համագումարների և խորհրդակցությունների կազմակերպության և ժողովրդական լուսավորության գործին ոժանդակելու կամպանիաներ անցկացնելուն:

28. Ժողովրդական առողջապահության ասպարիզում Գավառային Գործադիր Կոմիտեյի պարտականությունն է.

ա) Ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները վարակիչ հիվանդությունների տարածման առաջն առնելու և նրանց դեմ պայքար կազմակերպելու համար.

բ) Կազմակերպել սանիտարական հսկողություն.

գ) Պայքար կազմակերպել սոցիալական հիվանդությունների դեմ.

դ) Կազմակերպել սանիտարա-կրթական աշխատանք.

ե) Կազմակերպել բժշկության գործը գավառի սահմաններում.

զ) Կազմակերպել մայրության, մանկության և յերեխաների պաշտպանության գործը.

ը) Կազմակերպել բժշկա-սանիտարական հիմնարկություններին և բնակչությանը դեղորայք հայթայթելու գործը.

թ) Աջակցել բժշկական պերսոնալի վորակը բարձրացնելու գործին:

29. Բարեկարգության և բնակարանային գործի ասպարիզում Գավառային Գործադիր Կոմիտեյի պարտականությունն է.

ա) Հսկողություն ունենալ, վոր բարեկարգ վիճակի մեջ պահվին քաղաքների ու գյուղական բնակավայրերի փողոցները, հրապարակները և հասարակաց պետքերի համար ծառայող վայրերը.

բ) Հսկողություն ունենալ, վոր բարեկարգ վիճակի մեջ պահվին գավառի թե պետական և թե տեղական նշանակություն ունեցող ճանապարհները, կամուրջները, գետանցքները, նավահանգիստները, խճուղիները և հաղորդակցության այլ ճանապարհները.

գ) Միջոցներ ձեռք առնել ջրմուղներ, կոյուղիներ, հեռախոսային հաղորդակցություն, ելեքտրական լուսավորություն և այլ կոմմունալ ձեռնարկություններ կառուցանելու և սարքավորելու.

դ) Իրագործել գավառի սահմաններում բնակարանային կենտրոնական մարմինների դիրեկտիվները բնակելի տարածությունը աշխատավորների մեջև բաշխելու վերաբերմամբ.

ե) Աջակցել բնակարանա-շինարարական և բնակարանային կոոպերացիային և տուն-կոմմունաներին.

զ) Միջոցներ ձեռք առնել բնակավայրերը հրդեհներից պաշտպանելու համար.

ը) Միջոցներ ձեռք առնել շինելու և վերանորոգելու քաղաքացնացրած տները, քաղաքային կառուցվածքները, հիվանդանոցները, դպրոցները և այլն:

30. Գավառային Գործադիր Կոմիտեի պարտականությունն է՝ աջակցել Կ. Բանակին և Կարմիր Ոդային Նավատորմին կարմիր զինվորների կենցաղը բարելավելու գործում, միջոցներ ձեռք առնել զորամասերին գավառում բնակարաններ հատկացնելու. աջակցել զինվորական վարչության մարմիններին հերթական զորակոչերն ու զորաժողովները գլուխ բերելու, դասալքության դեմ պայքարելու և ընդհանուր զինվորական ուսուցումն ի կատար ածելու գործում:

31. Գավառային Գործադիր Կոմիտեն պարտավոր է աջակցություն ցույց տալ սպառողական, գյուղատնտեսական, արհեստավորական, վարկային և այլ տեսակ կոոպերացիայի:

32. Գավառային Գործադիր Կոմիտեն պարտավոր է ղեկավարել ընդհանուր և առանձին վարչության վիճակագրության, անկետներ ու ցուցակագրություններ և այլն կատարելու վերաբերմամբ ձեռնարկվելիք միջոցները:

Գլուխ 2.

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

33. Գավառային Գործադիր Կոմիտեի նախագահության նիստերը գումարվում են առնվազն չաբաթը մեկ անգամ:

34. Գավառային Գործադիր Կոմիտեի նախագահությունը՝

ա) Ղեկավարում է Գավառային Գործադիր Կոմիտեի նիստերը և յուր գործունեության տեղեկագրերը ներկայացնում է այդ նիստերին.

բ) Նյութեր է պատրաստում Գավառային Գործադիր Կոմիտեի նիստերի համար.

գ) Վորոշումների նախագծեր և ներկայացնում է քննություն Գավառային Գործադիր Կոմիտեին.

դ) Հսկում է Գավառային Գործադիր Կոմիտեի վորոշումների կատարման վրա.

ե) Հաբարերություններ և պահպանում Գավառային Գործադիր Կոմիտեի անունից.

զ) Վարչական կարգով պատիժների յե յենթարկում քաղաքացիներին և պաշտոնյաներին տեղական իշխանության պարտադիր վորոշումները խախտելու համար, գործող օրենքների համաձայն.

ը) Լուծում է մի կողմից՝ Գավառային Գործադիր Կոմիտեի բաժինների և մյուս կողմից՝ ստորադաս խորհուրդների և գործադիր կոմիտեների փոխհարաբերությունների վերաբերյալ խնդիրներն ու վեճերը.

թ) Գնահատում է իշխանության ստորադաս մարմինների գործողությունները և առաջարկում է Գավառային Գործադիր Կոմիտեին բեկանել նրանց կարգադրությունները.

ժ) Ղեկավարում է խորհուրդների ընտրություններն ու վերընտրությունները գավառի սահմաններում և հսկում է այդ ընտրությունների օրինականության վրա.

ի) Հրահանգում է բոլոր ստորադաս գործադիր կոմիտեներին ու նրանց մարմիններին, ամեն մի միջոց ձեռք է առնում գործող խորհրդային ապպարատը պարզեցնելու համար:

Գլուխ 3.

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

35. Գավառային Գործադիր Կոմիտեն ունի հետևյալ բաժինները.

ա) Ընդհանուր,

բ) Հողային,

գ) Զինվորական,

դ) Ֆինանսա-հարկային:

Բացի այս բաժիններից՝ Գավառային Գործադիր Կոմիտեին առընթեր կան՝

ա) Միլիցիայի Գավառային Վարչություն.

բ) Աշխատանքի Գավառային Տեսչություն.

գ) Գավառային Տեղեկատու-Վիճակագրական բյուրո.

դ) Արտակարգ Հանձնաժողովի Լիազոր, որ գործում է հատուկ կանոնադրության հիման վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Զինվորական բաժնի ֆունկցիաներն իրագործում է գավառային զինվորական կոմիսարիատը, որ գործում է Խ.Ս.Հ. Միության Հեղափոխական Զինվորական Խորհրդի հաստատած՝ գավառային Զինվորական Կոմիսարիատների գործող կանոնադրության հիման վրա:

36. Գավառային Գործադիր Կոմիտեի բաժինների գլուխն են կանգնած վարիչները, որոնց ընտրում է Գավառային Գործադիր Կոմիտեն մեկ տարի ժամանակով, համապատասխան կոմիսարիատների հետ համաձայնության գալով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բաժինների վարիչ կարող են նշանակվել Գավառային Գործադիր Կոմիտեի անդամները, բացի ընդհանուր բաժնի վարչից: Որ անպատճառ Գավառային Գործադիր Կոմիտեի Նախագահության անդամ պիտի լինի:

37. Գավառային Գործադիր Կոմիտեի բաժինները ղեկավարում են Գավառային Գործադիր Կոմիտեի բոլոր ստորադրյալ հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեության իրենց տեսչության վերաբերյալ ճյուղերը և վերահսկում են նրանց վրա: Կենտրոնական իշխանության բոլոր կարգադրությունները և ձեռնարկած միջոցները կարելի է իրագործել համապատասխան գավառային բաժինների ապպարատի միջոցով:

38. Գավառային Գործադիր Կոմիտեի բաժիններն իրենց՝

քնակչության համար պարտադիր նշանակություն ունեցող կարգադրություններն ու վորոշումները կարող են ի կատար ածել միայն Գավառային Գործադիր Կոմիտեի նախագահության միջոցով:

39. Գավառակների սահմաններում խորհրդային աշխատանքի առանձին ճյուղերի վերաբերյալ կարգադրություններն ու միջոցներն ի կատար ածելու համար Գավառային Գործադիր Կոմիտեի բաժիններն ոգտվում են գյուղական խորհուրդների և Գավառակային Գործադիր Կոմիտեների ապպարատներից:

40. Գավառային Գործադիր Կոմիտեի բաժինների վերացումը կամ միացումը, այլ և նոր բաժիններ ստեղծելը կարող է տեղի ունենալ, Գավառային Գործադիր Կոմիտեի առաջարկությամբ, միայն պատշաճ Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության հաստատությամբ:

41. Գավառային Գործադիր Կոմիտեի ընդհանուր և Ֆինանսա-հարկային բաժիններն ունին բաժանմունքներ, բայց այդ բաժինների կառուցվածքը Գավառային Գործադիր Կոմիտեները չեն կարող փոփոխել առանց յուրաքանչյուր անգամ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության համաձայնությունն առնելու:

42. Ընդհանուր բաժին բաղկացած է հետևյալ բաժանմունքներից.

ա) Տեղական տնտեսության,

բ) Ժողովրդական լուսավորության,

գ) Առողջապահության,

դ) Սոցիալական Ապահովության:

Բացի սրանից, ընդհանուր բաժնի կազմի մեջ են մտնում հետևյալ միացյալ մասերը.

ա) Ֆինանսա-նյութական.

բ) Դիվանատուն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Զարգացած տեղական տնտեսություն ունեցող գավառներում ընդհանուր բաժնի տեղական տնտեսության բաժանմունքը կարելի է դարձնել տեղական տնտեսության ինքնուրույն գավառային բաժին՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահության թույլտվությամբ:

43. Ընդհանուր բաժնի բաժանմունքների վարիչներին նշանակում է Գավառային Գործադիր Կոմիտեյի նախագահությունը ընդհանուր բաժնի վարչի առաջարկությամբ։

44. Գավառային Գործադիր Կոմիտեյի Ֆինանսա-հարկային բաժինը բաղկացած է հետևյալ յենթաբաժիններից.

ա) Հարկային,

բ) Տեղական ֆինանսների,

գ) Դիվանատուն,

դ) Ցել և մոլից դրամարկղ։

45. Ցուրաքանչյուր բաժին յուր տեսչության սահմաններում իրագործում է խորհրդային վարչության և տնտեսության առանձին ճյուղերի վերաբերյալ խնդիրներն ու միջոցները, որ մատնանշված են սույն կանոնադրության 19–32 հոդվածներում, և ներկայացնում է յուր գործունեության տեղեկագիրը Գավառային Գործադիր Կոմիտեյին, նրա նախագահությանը և համապատասխան ժողովրդական Կոմիսարիատին։

Գլուխ 4.

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

46. Գավառային Գործադիր Կոմիտեյի անդամները պարտական են հաճախել Գավառային Գործադիր Կոմիտեյի և այն հանձնաժողովների բոլոր նիստերին, որտեղ իրենք աշխատում են։

47. Գավառային Գործադիր Կոմիտեյի անդամները նրա անունից կարող են հանդես գալ միայն այն դեպքում, երբ հանդես գալու հատուկ լիազորություն ունին Գավառային Գործադիր Կոմիտեյի նախագահությունից։

48. Գավառային Գործադիր Կոմիտեյի անդամները չեն կարող թողնել իրենց պաշտոնները և հրաժարվել իրենց պարտականություններից առանց Գավառային Գործադիր Կոմիտեյի կամ նրա նախագահության թույլտվության։

49. Գավառային Գործադիր Կոմիտեների անդամները խորհրդակցական ձայնի իրավունք են վայելում գավառի սահմաններում գործող բոլոր խորհրդային հիմնարկությունների նիստերում։

50. Գավառային Գործադիր Կոմիտեյի անդամներին չի կարելի ձերբակալել իրենց գավառի սահմաններում առանց Գավառային Գործադիր Կոմիտեյի նախագահության դիտության։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝
Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝
Հ. ՏԱՏՅԱՆ

Յերևան.

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրաս. 211բ. Գաս. 442 Տիր. 2000

ՀՀ Ազգային գրադարան
NL0220759